

*Մ.Ս. Էրֆանի,
ՀՀ ԳԱՍ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի ասպիրանտ*

Համաշխարհային կրոնների պարլամենտական ժողովի կարե-
վորագույն արդյունքներից էր «Դեպի գլոբալ բարոյականություն»
հայտարարագիրը: Այս փաստաթուղթը առաջին անգամ առաջարկ-
վել է աստվածաբան Հանս Բանգի կողմից և ստորագրվել է կրո-
նական առաջնորդների կողմից, ինչպես Դալայ Լաման և Չիկագոյից
Ժոզեֆ Կարդինալ Բերնանդինոն: Պարլամենտական ժողովի ընթաց-
քում փաստաթղթի ներկայացումը զգալի ուշադրության արժա-
նացավ լրատվական միջոցների կողմից: Հետևաբար, հայտարա-
րագիրը ստացավ խառը ակնարկներ: Սակայն լայնորեն տարածված
ընկալում կա, որ այժմյան պատերազմները և բռնությունները,
աղքատությունը և տնտեսական անհավասարությունը, էկոլոգիա-
կան ավերածությունները և մարդկային իրավունքների խախտումը
արմատացել են ճգնաժամի հետևանքով, որը բարոյական է իր
բնույթով և գլոբալ իր մասշտաբներով: Այսպիսով, համաշխարհային
կրոնների առումով միասնական պատասխանը, ինչպես խթանում է
հայտարարագիրը, համարվում է պատշաճ: Եկեք ենթադրենք, որ
երկար տարիների ընթացքում այդ ջանքերը չէին կարող շփոթեցնել
կրոնական, մշակութային և բարոյական տարբերակման խնդիրները,
և ենթադրում են, որ բարոյականությունը, եթե առաջանում է ամբող-
ջական և արդյունավետ ձևով, չի կարող առանձնացվել որոշակի
կրոնական հավատի, գործնականի, հոգևորականության և կենսա-
ձևերի ցանցից: Առավել ստույգ, ես կցանկանայի վիճարկել, որ
փնտրելով գլոբալ անվանը արժանի բարոյականությունը, կրոնա-
կան բարոյագետները պետք է ուշադրություն դարձնեն և ակտի-
վորեն զբաղվեն դրանով՝ որպես բարո, վիճարկվող և բազմա-
կողմանի իմաստ և արժեք, որը կոչվում է «միջազգային իրավունք»:

Համառոտ քննարկելով կրոնական բարոյականության և մի-
ջազգային օրենքի միջև առաջացած ճեղքը, և այսպիսով են-
թադրությունը, որ միջազգային օրենքը չի կարող իրականում
մշակակել այն, ինչ պարլամենտը նպատակ ուներ, կան մի շարք
պատճառներ, թե ինչու միջազգային օրենքը պետք է դիտարկվի
որպես աստվածաբանների, կրոնի գծով գիտնականների, կրոնի
նվիրված անձանց և համայնքների կատարված ջանք՝ գլոբալ

բարոյականության ձևակերպման և իրականացման համար: Քանի որ կրոնը և միջազգային իրավունքը գոյություն ունեն մույն մոլորակում, ինչևհիցե, պատճառներ կան հույս ունենալու հասնել փոխհամաձայնության, ինչպես նաև՝ ավելի մանրամասն փոխադարձ քննադատության: Նույնիսկ իրատեսական գլոբալ քաղաքականությունը, որն արտահայտում է Հորեսյան աշխարհում ազգային պետությունների բախումից ստեղծված անհամաձայնություն իշխող «իրատեսական» բարոյականության նկատմամբ, այսպիսով հնարավոր է կրոնական համաձայնությամբ ապահովված բարոյականությունը լսել նորովի: Միջազգային փաստաբաններն իրենց հերթին սկսում են փնտրել կամուրջներ, որոնք հետ /կամ առաջ/ կտանեն դեպի կրոնը: Եվ իհարկե, մեծ ուշադրությունը դեպի միջազգային օրենքը երբեք չի բացակայել կրոնական բարոյականության կողմից, հատկապես մարդու իրավունքների, պատերազմի և խաղաղության ոլորտներում: Պետք է նշել, որ կրոնի և կրոնական բարոյականության ստույգ հարաբերությունը միջազգային օրենքի հետ շատ հազվադեպ է հանդիպում, իսկ մասնագիտական ժողովներում կամ գիտական ամսագրերում նշված ուղղակի թեմաները նվիրված են կրոնին կամ աստվածաբանությանը: Ավելի ճիշտ, դրանք վերաբերվում են խորը համոզմունքներ ունեցող անձանց և աստվածաբանների՝ պնդելով որ կրոնը շատ կարևոր է բարոյական գործողությունների և բարոյական ընթացքի համար, ինչպես նկարագրական, այնպես էլ նախնական: Կիրառելով պարլամենտական գլոբալ բարոյականությունը որպես մեկնման կետ՝ գոյություն ունեն մի շարք պատճառներ, և դրանցից բոլորը պահանջում են իրենց նրբությունները և ընդլայնումը, թե ինչպես դեպի կրոնը հակված անձինք և համայնքները կարող են ցանկանալ, Մայքլ Պոլանիի խոսքերով, «բնակվել» միջազգային օրենքի ընդարձակ և խորը աշխարհի ներսում բարոյականությունից «դուրս պոծնելու» համար, որն առավել հարմար և ճշմարտացիորեն գլոբալ է:

Եթե կրոնը ինչ-որ բան է, որն «ունեն» միջազգային օրենքը, այսպիսով միջազգային օրենքը կրկին կհամարվի մի փոքր հեռացված գլոբալ բարոյագետների աշխարհից: Մի շարք պատճառներ կան, թե ինչու բարոյագետները պետք է ակտիվորեն և քննադատորեն զբաղվեն միջազգային օրենքով, որպեսզի զարգացնեն առավել պատշաճ և արդյունավետ կրոնի վրա հիմնված բարոյականություն: Ստորև բերված են վեց պատճառներ՝ (ա) միջազգային օրենքը և պարլամենտական գլոբալ բարոյականությունը ընդհանրություն ունեն խնդիրների և թեմաների շուրջ, (բ) միջազգային օրենքը զերազանց նշանակության և արժեքի ենթադրելի կրիչ է, որի հիմքում դրված է պարլամենտական բարոյականությունը, (գ)

միջազգային օրենքը օգնում է կրոնական համայնքներին՝ փնտրելու և վերականգնելու իրենց սեփական բարոյական ավանդույթները, (դ) միջազգային օրենքը կարևոր հանդիպման վայր է կրոնի և գիտության համար, (ե) միջազգային օրենքը ներառում է իր աշխատանքի ընթացքում որոշակի ներքին աշխարհ, որով պարլամենտը սահմանում է բարոյականությունը, և (զ) միջազգային օրենքը կրոնի կարիքն ունի:

Մեր ծենալով բովանդակությանը, առաջին պատճառը, թե ինչու են գլոբալ բարոյագետները ուշադրության արժանացնում միջազգային օրենքը, համեմատաբար անմիջական է՝ միջազգային օրենքը կենտրոնական կետ է համարվում նշված թեմաների, հիմնական սկզբունքների, հրահանգների համար, որոնք նշված են պարլամենտական հայտարարագրում: Հայտարարագիրը հիմնված է հիմնարար սկզբունքի վրա, որ «մարդկանց պետք է մարդկային վերաբերվել», մի սկզբունք, որը կարող է արտահայտվել Ոսկե Օրենքի զանազան ձևակերպումներով: Նշված հիմնական սկզբունքով առաջանում են չորս «ամհետկանչելի հրահանգներ»՝ (ա) նվիրվածություն բռնությունից զերծ մշակույթին և կյանքի հարգանքին, (բ) նվիրվածություն միասնության մշակույթին և արդար տնտեսական կարգին, (գ) նվիրվածություն համբերության մշակույթին և ճշմարտության կյանքին, (դ) նվիրվածություն հավասար իրավունքների մշակույթին և համագործակցությանը տղամարդու և կնոջ միջև:

Գործ ունենալով ուժի օգտագործման և վեճերի հաշտությամբ լուծման հետ, միջազգային օրենքով սահմանվում է առաջին հրահանգը՝ նվիրվածություն բռնությունից զերծ մշակույթին և կյանքի հարգանքին: Հնարավոր է, միջազգային օրենքի երկարաժամկետ միտումն ուղղված էր պատերազմի բարդացմանը՝ որպես վեճերի լուծման եղանակ: Վեճերի լուծման համար նախընտրելի են ոչ բռնի միջոցները: Իհարկե, պատերազմները սկսվում են, և միջազգային օրինական սկզբունքները խախտվում կամ կեղծվում են բացեիբաց կամ նրբանկատ եղանակներով: Սակայն խախտումները կամ կեղծիքները անվավեր չեն դարձնում սկզբունքները, քանի որ ոչ ստորագրողների սկզբունքները, ոչ մտադրությունները պարլամենտական գլոբալ բարոյականության նկատմամբ, որը իմ կարծիքով, բացարձակ չէ կազմակերպված զանգվածային բռնությունների ինքնահրաժարմամբ: Ինչ վերաբերվում է գլոբալ բարոյականությանը, որը վերաբերվում է կյանքի հարգանքին, այն արտահայտում է պատերազմի վերաբերյալ իր սկզբունքները /օրինակ՝ ժենևի համաձայնագիրը/ և մարդու իրավունքների մասին օրենքը: Սակայն այն արտահայտվում է նաև շրջակա միջավայրի մասին օրենքով: Այս առումով միջազգային օրենքով, ինչպես պարլամենտական գլոբալ

բարոյականությամբ «կյանքի հարգանքը» վերաբերվում է մարդկանց և կենդանիներին: Հայտարարագրի երրորդ և չորրորդ հրահանգները /համբերությունը, ճշմարտությունը, զենդերային հավասարությունը/ արտահայտվում են մարդու իրավունքների համաձայնագրում, չնայած կանանց իրավունքների հետաքրքրությունը, իհարկե, ուշացել է միջազգային իրավական աշխարհում: Սրանով առաջարկվում է, որ միջազգային մարդու իրավունքների վերաբերյալ իրավունքը տվյալ դեպքում վերաբերվում է կրոնական նախընտրություններին, որոնք կարող են առաջացնել ավելի ընդարձակ կոնցեպտուալ և պրակտիկ ցանց, քան ստեղծում են որոշակի կրոններ և ավանդույթներ, հատկապես այն ավանդույթները, որոնք հարկադրում կամ ստիպում են հնարավոր հավատացյալներին: Երկրորդը, կանանց իրավունքներին վերաբերվող միջազգային համաձայնագրերը կարող են, և իհարկե երբեմն կանգնած են որոշակի կրոնական ավանդույթների դեմ:

Խնդիրը նրանում է, որ նշված հարցը խնդրառու է: Միջազգային օրենքը կարող է կազմվել՝ որպես որոշակի կրոնական համայնքների խնդիր, բախվելով իրենց սեփական հավատքի համակարգերի սահմանափակումներին, իրենց սեփական «խմբակային հակվածությանը», եթե ցանկանաք: Այդ հնարավորությունը իր հերթին փոխում է այն ենթադրությունը, որ զլորալ բարոյականությունը միշտ կլինի, ինչպես առաջարկում է հայտարարագիրը «առավել, քան օրենքը»: Երբեմն օրենքը «առավել է, քան բարոյականությունը»: Այսինքն, օրենքը, այդ թվում միջազգային օրենքը, կարող է բարձրացնել որոշակի կրոնական ավանդույթները ավելի բարձր չափանիշի, քան ներկայիս հավատքը, գործնականը և նույնիսկ առանձին հավատացյալների ներքին հանգումները: Կատարվելիք ենթադրությունը երկակի է: Մի կողմից, ընդհանուր ժառանգականության հայեցակարգը կարող է կազմավորվել՝ որպես փոխանցում, նշում, ազդանշան, գերազանցող իմաստ և արժեք: Այն ոչ միայն խթանում է միջազգային իրավական հաղորդակցությունը և գործնականը միջպետական մոդելի ներքո, որն առավել կամ պակաս գերազանցող է Վեստֆալիայի խաղաղության ժամանակաշրջանից՝ որպես ամբողջություն դիտարկումների համար: Այն նաև նշում է մարդկային ռասան և մոլորակը: Մարդը կարող է վիճարկել օվկիանոսի խորությամբ և լայնությամբ համապատասխանող մտավոր հիմքի հետազոտության հայեցակարգը, որը տանում է դեպի մարդասիրություն և բնական աշխարհ: Եթե երկիրը իր հերթին հանդիսանում է մարդկանց ժառանգականությունը, ապա ի՞նչը կամ ո՞վ է սկզբնական շահառու: Արդյո՞ք վերջին սերունդները կստանան այդ ժառանգությունը: Իհարկե, բնությունը չի լինի այն, որտե-

ղից կառաջանա բնական աշխարհը: Արդյո՞ք կդառնա օվկիանոսը և այն ամենը, ինչ նա ունի: Եթե հարցը նրանում է, որ աշխարհում ամեն բան կտրվի մարդուն որպես ամբողջություն, որ կետից են մարդիկ դիտում ամբողջականը, եթե ոչ գերազանցող տեսակետից, եթե նույնիսկ դիտարկողներն իրենց կարծիքով և «շահեռով», նվիրված են մնում երկրին և ծովին: Արդյո՞ք նշված դիտարկողները իրենց պատկերացման և ցանկության շնորհիվ կանգնած են երկրի և երկնքի միջև: Մարդկային ամբողջական ժառանգականությունը բերում է «վերջնական իրողության»: Մյուս կողմից, ամբողջական ժառանգականության հայեցակարգի կրոնական կարևորությունը առաջանում է միջազգային օրենքից, ինչպես այն գոյություն ունի և գործում է այսօր:

Մարդը կարող է ցույց տալ ամբողջական ժառանգականության հայեցակարգը, մինչդեռ նա ունեցել է օրինական հայեցակարգ 1990-ականների ընթացքում, և չի ունեցել միջազգային օրենքի աստվածաբանական հիմք ունեցող տարբերակներ ավելի վաղ, օրինակ Գրոցիուսի կողմից ստեղծվածները: Մարդը կարող է փորձել ցույց տալ գաղափարների պատմության մեջ կապը, հնարավոր է հետևանքային կապը ընդհանուր ժառանգականության և աստվածաբանական նախնիների միջև: Առնվազն մեկ պատճառով, որը կքննարկվի ստորև, նման հետազոտությունները չափազանց արժեքավոր են: Սակայն կետը, որը ցանկանում են ընդգծել, դա գերազանցության վերաբերյալ ուսմունքն է, վերջնական ծագման և ավարտի մասին, որը կարիք չունի ներառվել միջազգային օրենքում կրոնական ավանդույթների կողմից, նույնիսկ նշելով ավելի վաղ աստվածաբանական արմատներ կամ ներկայիս պայմանների, հայեցակարգերի և սկզբունքների նմանություններ: Այսպիսով, գերազանցության, վերջնական ծագման և ավարտի մասին հարցերը կարող են առաջանալ նորովի միջազգային որոշումների ընդունման գործընթացի կոնկրետությունից, քանի որ այն գոյություն ունի այսօր, տվյալ դեպքում համաշխարհային օվկիանոսի ապագայի վերաբերյալ որոշումների ընդունման հետ զուգընթաց: Միջազգային փաստաբանները կարող են մի կողմ դնել «գերազանցության» խնդիրը, նվազեցնելով և նեղացնելով օրենքի կամ քաղաքականության, տնտեսագիտության սահմանումները: Նրանք կարող են անտեսել վերջնականության խնդիրները: Նրանք կարող են դիտարկել նման խնդիրները՝ որպես կարևոր խնդիրներից շեղում: Սակայն նրանք չպետք է անհանգստացնեն կամ վախեցնեն գլոբալ բարոյագետի: Այն փաստը, որ կրոնական հայացքներ ունեցող բարոյագետը ինքն է գտնում հարցերի վերջնական պատասխանը, որոնք առաջանում են կոնկրետությունից և միջազգային օրենքի պատմա-

կանությունից, ինչպես նաև օրենքի կազմման քաղաքականությունից և տնտեսությունից, սա է պատճառը, որ մենք ավելի մեծ ուշադրություն դարձնենք, ավելի խորը հասկանանք, առավել ամբողջական դիտարկենք հայեցակարգը, գործնականը և միջազգային օրենքի բարդ դիմամիկան: Սակայն ավելի խորը զննմանը բերող նման սկզբնական բացահայտումը չի կարող տեղի ունենալ առանց միջազգային օրենքի մեջ գլոբալ բարոյագետի նախնական խորացման, խորացում, որի համար այս հետազոտությունը ընդլայնված փաստարկ է:

Վերջնական պատճառը, թե ինչու են աստվածաբանները և մյուս կրոնապետ՝ զգացական անձինք ուշադրություն դարձնում միջազգային օրենքին այն է, որ միջազգային օրենքը կրոնի կարիքն ունի: Նշված ենթադրությունը վերաբերվում է վերոնշյալ դրույթներին: Սակայն նշված ենթադրությունը մինչև վերջերս մի կողմ էր դրվել, քանի որ իմ առաջնային մտադրությունն էր խրախուսել գլոբալ բարոյագետներին դիտարկել միջազգային իրավունքը՝ որպես հեռանկարային գլոբալ բարոյականության վերաբերյալ ծգնաժամային դիրքորոշում: Ինչևէ, միջազգային փաստաբանները կարող են կարիք ունենալ մի կողմ դնել կրոնը կամ պահել այն իրենց ձեռքում, քանի որ կարևոր է ընդգծել, որ գլոբալ բարոյագետները նույնպես միջազգային օրենքի կարիքն ունեն: Ինչպե՞ս է պատահել, որ միջազգային օրենքը կրոնի կարիքն ունի: Կարող է երկու եղանակ լինել: Առաջինը, կրոնը որոշակի կենսական գործառնություն է կատարում միջազգային օրենքի աջակցման և աճի համար: Իր ստեղծագործական գործառնությամբ կրոնը ազդում է միջազգային օրենքի հաստատությունների վրա: Կրոնը ստեղծագործական առումով ազդում է նաև միջազգային իրավական ուսմունքի վրա: Կրոնի ծգտողական գործառնությունը տանում է օրենքը դեպի առաջ և օգնում է ստեղծել նոր օրենքներ: Կրոնը ծառայում է՝ որպես կարևոր խրատական գործառնություն, հասկանալի դարձնելով միջազգային օրենքի թեմաների ամբողջությունը՝ մարդու իրավունքները, տնտեսական արդարությունը, պատերազմի օրենքները և խաղաղության օրենքները: Իր խնամակալական գործառնությամբ կրոնը պահպանում է միջազգային օրենքը և միջազգային համայնքը, պահպանելով օրենքի և համայնքի արմատական արժեքները, իրագործելով այդ արժեքները տարբեր ուղղություններով: Վերջապես, կրոնն ունի հայեցողական գործառնություն: Երկրորդը, կրոնը կարող է ապահովել օրենքը գլոբալ հասարակության խորը և ապացուցողական տեսակետերով: Մինչդեռ, անորոշ տերմինները, ինչպես «տիեզերական գիտակցությունը» և «գլոբալ հոգևորականությունը» չափազանց խնդրառու են, դրանք չեն կարող անտեսվել միջազգային

օրենքի մեջ ընդգրկված անձանց կողմից՝ ճանաչելու կրոնական գիտակցությունը կամ դրան մասն տերմիններ՝ որպես մատչելի և իրենց փորձերի վերջնական հաջողություն: Պետք է նշել, որ դա հոգևոր հորիզոն է հանդիսանում, մարդու հոգու անկախության հորիզոն, քանի որ մարդկային հասարակությունները և մարդիկ որտեղ էլ որ լինեն սկսում են վերցնել բարոյական և սոցիալական պատասխանատվություն ամբողջ մարդկության կենդանի մնալու և բարգավաճման համար:

Սույն հոդվածով ես առաջարկել եմ պատճառներ, թե ինչու կրոնական հիմքեր ունեցող գլոբալ բարոյականությամբ զբաղվող մարդը պետք է ուշադրություն դարձնի միջազգային օրենքին: Պետք է հաշվի առնել հիմնական գաղափարը, քանի որ օրենքը բարոյական նշանակության և արժեքի ենթադրելի կոչ է, հնարավոր գերազանց նշանակության և արժեքի, և քանի որ միջազգային օրենքը միտում ունի ընդհանրության, սակայն անխուսափելիորեն ընդգրկում է բոլոր խնդիրները, որոնք վերաբերվում են հատկանիշներին, տարբերակմանը, ուժային հարաբերությանը և այլն, ցանկացած անձ, որը հետաքրքրված է գլոբալ բարոյականությամբ, պետք է հետազոտի միջազգային օրենքում պարունակվող բարոյականությունը: Սակայն ավելի պարզ բացատրությունը հետևյալն է՝ քանի որ հետազոտության ոլորտը կրոնական բարոյականությունը կամ օրենքն է, մարդն է դրանով զբաղվում: Այսինքն, մտածելով կրոնական հիմքեր ունեցող գլոբալ բարոյականության մասին, մի կողմից և միջազգային օրենքի մասին, մյուս կողմից, առաջնային շեշտը պետք է դրվի բարոյական կառուցվածքի վրա, որը ենթակա է համեմատության, հակադրության և սահմանման, սակայն որոշակի թեմաների շուրջ՝ անձանց և համայնքների, որոնք գործում են յուրաքանչյուր ոլորտում: Սրանցով կարելի է գտնել նմանություններ և տարբերություններ, երբ համեմատում ենք գլոբալ բարոյականությունը՝ որպես սկզբունքների, նորմերի և արժեքների մի հավաքածու, միջազգային օրենքի հետ, որը հանդիսանում է սկզբունքների, նորմերի և արժեքների մեկ այլ հավաքածու: Այլ բան է առաջարկել, որ հաղորդակցող կետը հանդիսանում է դիմամիկ առարկա, որը գործում և փոխանցվում է այլ դիմամիկ առարկաների հետ, որոնք տարածվում են ամբողջ մոլորակով: Թե ինչ եզրակացության եմ ես եկել, դա այն հնարավորությունն է, որ Բերնարդ Լոներգանի խոսքերով, կրոնը և իրավական գործունեությունը փոխում է մարդկանց՝ գործելու, համաձայն նորմերի, որոնք կողմնակի են անձի համար, սակայն ներհատուկ են գիտակցությանը և նորմերին, որոնք կարող են թեմականացվել: Եղիոր ուշադիր /տվյալների նկատմամբ/, եղիոր խելացի /ընկալի, պատրաստ եղիոր փնտրել և ընդունել

տվյալների մատչելիությունը/ եղիր ողջամիտ /փորձիր հիպոթեզեր, ստուգիր ներքին համոզմունքը, քննադատորեն վերաբերվիր քո և մյուսների «փայլուն գաղափարներին»/, եղիր պատասխանատու /կատարիր ընտրություններ, համաձայն խորը զգացվող արժեքների և առանց արագ բավարարման/, եղիր սիրող /պատրաստ եղիր ունենալ սեփական կողմնորոշում և արժեքների դիրքորոշում, որը սահմանվում է աստվածային սիրով և քո ու մյուսների ընդունելությամբ/: Կրոնի և միջազգային օրենքի միջև առավել կառուցողական կապը-զարգացնելու համար պետք է անցնել աշխատանքի սահմաններից դուրս: Այն չի համապատասխանում նաև առարկություններին, որ իմ ունեցած կապը հանդիսանում է իդեալիզմի և Արևմտյան իմպերիալիզմի ձև, կամ որը պայմանավորված է մեծ բացի նկատմամբ անտարբերությամբ կրոնի և միջազգային օրենքի և քաղաքական բանակցությունների «իրական աշխարհի» աշխատեցման եղանակների միջև: Առաջարկը և հույսերը, որ այս և այլ առարկությունները կարող են արտացոլվել, ոչ թե սույն ակնարկում, այլ զլորբալ բարոյագետի աշխատություններում, խորանալով միջազգային օրենքի մեջ՝ պատմության, տեսության, ներքին աշխատանքի և գործընթացների, քննադատական և բարդ խնդիրների մեջ, որի հետ նա գործ ունի: Նշված խորացումը կարող է արագ բերել զլորբալ բարոյագետներին մարդկային սուբյեկտիվիզմի դեմ, չնայած գերազանցող ընկալումը դիտարկվում կամ խախտվում է նրբորեն, այլ ոչ նուրբ եղանակներով: Միջազգային օրենքի պատկերի ներկայացումը կօգնի համոզվել, որ բախումը տեղի կունենա ոչ թե միջկրոնական երկխոսության մոտակա սենյակում, այլ դիմամիկ և կոնկրետ պատմության մի փուլում մարդկային ռասայի և տիեզերքի միջև, որտեղ այն բնակվում է:

REFERENCES

- 1- Parliament of the World's Religions, "Towards a Global Ethic (An Initial Declaration)", (Parliament of the World's Religions, Chicago, 1993)
- 2-See Paul J. Griffiths, "Why We Need Interreligious Polemics," First Things (July 1994), pp. 31-37.
- 3-For one recent expression of such discontent, see Ken Booth, "Human Wrongs and International Relations," International affairs 71 (1995): 103-26.

4-See Bo The Gutenberg, "Different Trends of the International Legal System Today," in Dupuy, ed., *The Future of International Law in a Multicultural World*, pp. 261-87; and Janis, ed.

5-see, e.g., James Turner Johnson, *Ideology, reason, and the Limitations of War: religious and Secular Concepts, 1200-1740* (Princeton, N.J.: Princeton University Press, 1975)

6- Michael Polanyi, *Personal knowledge: towards a Post-critical philosophy* (Chicago: University of Chicago Press, 1962), pp. -202. 195

7- Parliament of the World's Religions, "Towards a Global Ethic (An Initial Declaration the World's Religions, Chicago, 1993).pp.4-6

8- Peaceful Settlement of Disputes between States: History and Pros-pects," in *The Structure and Process of International law: Essays i n Legal Philosophy Doctrine and Theory*, ed. R. St. J. MacDonald and D. M. Johnston (The Hague: Martins Nijhoff, 1983), pp. 1095-1120.

9- See "Global Ethic p. 4

10- Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women, *Human Rights of Women: National and International Perspectives* (Philadelphia: University of Pennsylvania Press, 1994)

11- Kirti Singh, "Obstacles to Women's Rights in India," in Cook, ed., pp. 375-96;

12-On group bias, see Bernard Lonergan, *Insight: A Study in Human Understanding* (New York: Philosophical Library, 1970), pp. 222-25. 45

13- The issue of dominance of the interstate model is more nuanced than can be suggested here. See Antonio Cassese, *International Law in a Divided World* (Oxford: Oxford University Press, 1986);

14- See Hugo Grotius, *The Freedom of the Seas, or the Right which Belongs to the Dutch to Take Part in the East Indian Trade*, trans. James Brown Scott (New York: Oxford University Press, 1916), p. 2.

15- See Harold J. Berma, *Law and Revolution: the formation of the Western legal Tradition* (Cambridge, Mass.: Harvard University Press, 1983) *International Law Needs Religion*.

16- Philip Allot, *Encomia: New Order for a New World* (Oxford: Oxford University Press, 1990)

17- See "Intergenerational Equity: A Legal Framework for Global Environmental Change," in *Environmental Change and International Law: New Challenges and Dimensions*, ed. Edith Brown Weiss (Tokyo: UN University Press, 1992), pp. 385-412, esp. pp. 398-401.